ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2013-2016ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար Անդրանիկ Հարությունյանը

Քննարկվել և հաստատվել է Հարթագյուղ համայնքի ավագանու 2013թ-ի փետրվարի 25-ի նիստի թիվ 04-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Առանձին բնագավառներում առաջնահերթ խնդիրների, ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները՝

Հավելված – 1. *Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը*

Հավելված – 2. *Համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքը*

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Հարթագյուղ համայնքի քառամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

Համայնքի իրավիճակի գնահատում:

1.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:

2.Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում:

3.Ոռոգման ցանցի և տեղական նշանակություն ունեցող ջրամբարի կառուցում:

4.Մշակույթային համակարգի բարեփոխում, Կրթամարզամշակութային համալիրի գույքի ձեռք բերում:

5.Գործազրկության կրճատում, աշխատատեղերի ստեղծում:

6.Բնակչության իրավունքների պաշտպանություն:

7.Կոմունալ ծառայությունների բարելավում:

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է

ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. Գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը և կոլեկտիվերի ստեղծմանը
2. Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավմանը
3. Բնակչության ֆոնդի ավելացմանը, բնակչության արտագաղթի պակասեցմանը
4. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական և սպորտային դաստիարակությանը
5. Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը
6. Համայնքում աղբահանության կազմակերպման և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծմանը:
7. Արտակարգ իրավիճակների վերացմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա 2013-2016թթ. ծարագրում ներառված են համայնքի հիմնական խնդիրները:

Համայնքային զարգացման քառամյա ծրագիրը հրապարակվում է համայնքի զարգացման ընդհանուր խնդիրների մասին պատկերացում կազմելու, առաջիկա 4 տարում ռեալ ծրագրեր և բյուջե կազմելու, տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները կոորդինացնելու համար:

Ծրագրում ներկայացված են հետևյալ փաստաթղթերը.

1. գյուղապետի ուղերձը
2. Համայնքի մասին ընդհանուր տեղեկատվություն
   - պատմական ակնարկ
   - ժողովրդագրություն
   - տեղական ինքնակառավարման մարմիններ
   - կրթություն, մշակույթ, սպորտ
   - բնակարանաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, ճանապարհներ
   - հողօգտագործում, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն
   - տնտեսության զարգացում
   - առողջապահություն, սոցիալական վիճակ
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
4. Առաջնահերթ ծրագրերի կոնկրետ խնդիրների ձևակերպումը ըստ առանձին բնագավառների
5. Բյուջեի ֆինանսական ցուցանիշների վերլուծություն ըստ տարիների
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների, գույքի առկայությունը
7. Հավելված գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքի մասին
8. Հավելված գյուղապետարանի ենթակա կառույցների մասին

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հարթագյուղ գյուղը գտնվում է Լոռու մարզում,Սպիտակի նախկին շրջանի վարչական տարածքում, սահմանակից է Լոռու մարզի Խնկոյան, Լուսաղբյուր, Սարալանջ, Մեծ-Պարնի,Ծաղկաբեր գյուղերին:Գյուղը Հիմնադրվել է 1826թ. ներկա տեղում, ծովի մակերևույթից բարձր է 1780մ., վարչական տարածքը կազմում է 2399հա:

Կլիման խիստ է, ձմեռը լինում է ցուրտ, գարունը սովորաբար ուշացած է գալիս, իսկ ամառը զով է հաճախակի քամիներով:

Տարեկան տեղումները մասնավորապես ձմռանը շատ են ձնածածկույթից հաճախակի փակվում են ճանապարհները, ամռանը լինում են կարկտահարություն և սելաֆներ:

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում լինում են երկրաշարժեր:

Աղետալի են եղել 1926թ.-ի և 1988թ.-ի երկրաշարժերը:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը	1404
. տղամարդ	762
. կին	678
. նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան)	86
. դպրոցական տարիքի (7-17 տարեկան)	195
. միջին տարիքի (18-60 տարեկան)	511
. 60 տարեկանից բարձր	151
. ընտանիքների թիվը	424
. գրանցված ընտրողների թիվը	877

<u>Բնակչության սոցիալական կազմը</u>

1. Կենսաթոշակառուներ, որոնցից՝		164
	հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	37
	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	14
	երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
	մանկուց հաշմանդամ երեխաներ	4
	միայնակ կենսաթոշակառուներ	127
	զոհված ազատամարտիկների ընտանիքներ	-
2.	Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից ՝	13
	ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ *(1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)*	1
3.	Փախստականներ *(մարդ)*	-
4.	Բռնադատվածներ	3
5.	Բազմազավակ ընտանիքներ *(3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)*	55
6.	Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը *(միջինը)*, այդ թվում՝	153
	ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	105
	միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը *(միջինը)*	1

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 800 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 74 մարդ: Հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2012թ. սեպտեմբերի 09-ին համայնքի ղեկավար է վերընտրվել Անդրանիկ Սենիքերիմի Հարությունյանը: Բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Հարթագյուղ համայնքի ղեկավարը, համայնքի նորընտիր ավագանին իր 5 անդամներով նպատակասլաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթելու պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:

Գյուղապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

գյուղապետի օգնական – 1 միավոր

աշխատակազմի քարտուղար – 1 միավոր

առաջատար մասնագետ – 1 միավոր

1-ին կարգի մասնագետ – 1 միավոր

2-րդ կարգի մասնագետ -- 2 միավոր

վարորդ-մեխանիզատոր -- 1 միավոր

խմելու ջրի սանտեխնիկ -- 1 միավոր

տեխնիկական աշխատող -- 1 միավոր

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը՝ 9 մարդ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ

Կրթական համակարգը ներառում է 1 միջնակարգ դպրոց: Չի գործում մանկապարտեզ շենքային պայմանների բացակայության պատճառով:

Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է Հարթագյուղի միջնակարգ դպրոցում: Դպրոցը կառուցվել է 1999թ-ին, 2011թ-ին կապիտալ վերանորոգվել է: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, 1 ուսուցչին ընկնում է մոտ 7 աշակերտ, աշակերտների թիվը կազմում է 131, իսկ աշխատողներինը՝ 26, որից ուսուցիչ՝ 19: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով: Դպրոցը գազաֆիկացված է, ջեռուցումը կատարվում է գազակատսայի ընդհանուր համակարգով, ունի մշտական խմելու ջուր, ունի կոյուղի:

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը սպորտդահլիճի բացակայությունն է:

Համայնքում կառուցվում է համայնքային կենտրոն ՀՄՆՀ-ի միջոցներով նախատեսվում է համայնքին հանձնել 2013թ.-ի մայիս-հունիս ամիսներին:

Համայնքային կենտրոնի շենքի ավարտից հետո, համայնքը կունենա գյուղապետարանի համար նախատեսվող շենքային բոլոր հարմարությունները, կգործի կուլտուրայի տունը իր խաղասենյակներով կունենանք երգի պարի խմբակ, շենքում կտեղակայվի գրադարանը բուժ պունկտը, որը ներկայումս գործում է տնակներում:

ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Համայնքի բնակֆոնդը կազմում է 16494քմ:
Համայնքի շահառու բնակիչները հիմնականում բնակարանով ապահովված են բացառությամբ 9 ընտանիքներ որոնք տարբեր պատճառներով դուրս են մնացել բնակարանաշինության ցուցակներից և մոտ 80 ընտանիքներ որոնք շահառուներ չեն:
Հարթագյուղ համայնքը չունի աղբահանության կառույց: Աղբահանությունը կատարվում է գյուղապետարանի միջոցով:
Համայնքի ենթակայության ճանապարհները 31 կմ. են որից 3,4 կմ. 2012թ.-ին ասֆալտապատված է պետ բյուջեի միջոցներով 18 կմ խճածածկույտով 9,6 կմ-ը բնահողային:
Համայնքի բնակչությանը սպասարկում է երկու ավտոբուս և երկու միկրոավտոբուս օրեկան 2-ական անգամ Հարթագյուղ-Սպիտակ-Վանաձոր մեկ անգամ Հարթագյուղ գյումրի և մեկ անգամ Հարթագյուղ Երևան:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2359.2 հա որից 1543,6 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, բնակելի շինությունների տակ հողերը 119.19 հա արդյունաբերության և կապի, 19.21 հա ջրային և անտառային հողերը 256.8 հա հատուկ պահպանվող հողերը 3.2 հա:

Համայնքի ազգաբնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Գյուղատնտեսական նշանակության հողերը մասնավորապես վարելահողերի 20 % -ն է օգտագործվում, որոգման ջուր չլինելու պատչառով: Երկրաշարժի հետևանքով դադարեց «Նալբանդի» ջրանցքի գործունեությունը և համայնքում ներկայումս որոգվում է «Չուխուրհանդ» կոչվող հանդամասը մղման պոմպի միջոցով, որոգման ջրի և տեխնիկայի պակասը հանգեցնում է վարելահողերի չմշակմանը:

Անասնապահության հիմնական ճյուղը հանդիսանում է խոշոր եղջերավոր անասունները, 493 գլուխ, որից կովեր 269 գլուխ, մոզի 176, երինջ 48, և 273 գլուխ մանր եղջերավորներ:

Համայնքում հաշվառման ժամանակ առկա է եղել 44 գլուխ խոզեր և 65 փեթակ մեղվաընտանիքներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Համայնքում գործում է բուժ կետ որը գտնվում է <<Մեծ Պարնի>>հիվանդանոցի ենթակայության տակ:Բուժ պունկտը գործում է վագոն տնակում, մեկ պուժքրոջ սպասարկմամբ:
Բուժ պունկտը ազգաբնակչությանը սպասարկում է անվճար դեղորայկը տրամադրվում է <<Մեծ Պարնի>> հիվանդանոցի կողմից նաև որոշակի գումար է տրամադրում գյուղապետարանը դեղորայկ ձեռք բերելու նպատակով:
Նախատեսվում է համայնքի կենտրոն շենքի կառուցումից հետո բուժ պունկտին կտրամադրվի երկու սենյակ բնակչությանը սպասարկելու համար:
Շատ ցածր է բնակչության սոցիալական վիճակը:
Եկամտի աղբյուր է հանդիսանում գյուղատնտեսությունը և անասնապահությունը, որը ապահովում է շատ ցածր եկամուտ: Աղքատության տոկոսը կազմում է ընդհանուր թվի 45 %-ը որոշակի եկամտի աղբյուր է հանդիսանում արտագնա աշխատանքները: Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 80 մարդ հիմնականում կրթության, տեղական ինքնակառավարման և <<Ղալթախչի>> զորամասում:
Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 190 ընտանիքներ, որից նպաստառու են 105 ընտանիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ, ինչպես նաև դրանից հետո ձեռք բերված գույքով՝ հետևյալ արտահայտությամբ.

* Գյուղապետարանի ժամանակավոր կառույց - 1 միավոր
* Ժամանակավոր կենցաղի տուն - 1 միավոր
* Խմելու ջրի կապտաժներ - 3 միավոր
* Խմելու ջրի ջրամբար - 2 միավոր
* Գերեզմանատուն - 2 միավոր
* Ավտոպարկ - 1 միավոր
* Խմելու ջրի խորքային պոմպակայան - 1 միավոր
* Տնակ շարժական - 2 միավոր

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Որոգման ջրի և տեխնիկայի բացակայությամբ չեն մշակվում վարելահողերը, ինչպես նաև համայնքից երկարատև բացակայող բնակչության պատճառով չեն կատարվում հարկային պարտակայությունը հիմնականում հողային:
*Համայնքի 641 հա վարելահողի մոտ 500հա չմշակվող հողատարածքը «խլուրդ» կոչվող մկների աննախադեպ աճի պատճառով անհնարին է դարձել այդ հողատարածքից որևե օգուտ ստանալ:
*Արտագնա աշխատանքը և բնակչության արտահոսքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2012թ.-ին կառուցվել և ասվալտապատվել է Վանաձոր-Գյումրի ճանապարհից դեպի համայնք մտնող ճանապարհը մոտ 3,5 կմ երկարությամբ, որը հեշտացրել է բնակչության շարժը և բերքի իրացման հարցում:
Համայնքը գազաֆիկացված է մոտ 80 %-ը, իսկ մնացած մասի գազաֆիկացման աշխատանքները ընթացքի մեջ է:
Համայնքը ապահովված փողոցային լուսավորությամբ:
Համայնքի առկա արոտավայրերը և խոտհարքները հարուստ պաշար հիմք է հանդիսանում անասնապահությանզարգացման և կաթի արտադրությունը:
Գործող առևտրի օբյեկտները հիմնականում բավարարում են բնակչության պարենային պահանջները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Որոգման ջրի և գյուղտեխնիկայի բացակայությունը, հանգեցնում է վարելահողի չմշակմանը, որը ազդում է գյուղատնտեսության զարգացման վրա: Համայնքում մեծ անօթևան բնակիչների թիվը, որոնք շահառու չեն, և համարվում են անապահով ընտանիքները:
Համայնքում բացակայում է նախադպրոցական հիմնարիկի գործունեությունը շենքային պայմաններ չլինելու պատճառով, որը ազդում է մատաղ սերնդի դաստիերակության և հետագայում կրտվածության աստիճանի վրա:
Համայնքում բարձր է սոցիալապես անապահով ընտանիքների թիվը:
Համայնքի միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի բացակայությունը, որը մեծ նշանակություն ունի աշակերտների ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի նկատմամբ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը, ավագանին հաշվի առնելով բնակչության պահանջները, սահմանում են զարգացման հետևյալ ռազմավարությունը՝ համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օժանդակել գյուղատնտեսական արտադրության ավելացմանը: Առաջիկա 4 տարում համայնքի հիմնական նպատակային խնդիրներն են.

- Նոր կառուցվող համայնքային կենտրոնի շենք համար գույքի և համապատասխան պարագաների ձեռք բերում
- գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում
- կանգառների կառուցում
- համայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Գերեզմանատան ճանապարհի բարեկարգում.
- նոր հեղեղատարների կառուցում և մաքրում
- համայնքի կարիքների համար մարդատար տրանսպորտի ձեռքբերում
- Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռ բերում:
- համայնքի ամբողջական գազաֆիկացում
- Ծայրամասային փողոցների գիշերային լուսավորության լիովին ապահովում
- Միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցում
- աջակցություն մանր և միջին բիզնեսի զարգացմանը
- Տեղական նշանակություն ունեցող որոգման ջրի ջրամբարի կառուցում:
- 24 հա կոչվող հանդամասը որոգման համար Խնկոյանի ջրամբարի վրա պոմպակայանի տեղադրում:
- Ֆուտբոլի և վոսկետբոլի դաշտի կառուցում
- Մարզամշակութային համալիրին կից նոր խմբակների ստեղծում
- ԴՏ-75 մակնիշի տրակտորի ձեք բերում «ռոտոր» կոչվող սարքավորման հետ միասին:

- Հնարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում
- Համայնքի պահուստային ֆոնդից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում

4. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ 1

Նոր կառուցվող համայնքային կենտրոնի շենքի համար գույք և համապատասխան սարքավորումների ձեռք բերում:

Նկարագիրը – 2012թ.-ին ՀՄՆՀ.-Ի միջոցներով կառուցվում է համայնքային կենտրոնի շենք, որը նախատեսվում է հանձնել համայնքին 2013թ.-ի մայիս-հունիս ամիսներին: Շենքը ծառայելու է որպես գյուղապետարան, համայնքային դահլիճ-սրահ, գրադարան, բուժ-կետ, խաղասրահ, փոստի բաժանմունք և համայնքին անհրաժեշտ այլ ծառայություններ, վերոհիշյալ ծառայությունների գործունեության համար անհրաժեշտ է կահավորել գույքով և սարքավորումներով:

ՆՊԱՏԱԿԸ – իրականացնելով այս ծրագիրը համայնքը կունենա բոլոր ծառայությունների համար համալիր կենտրոն, մասնավորապես որտեղ կգործեն երգի պարի, սպորտային և այլ խմբակներ:

ԽՆԴԻՐԸ- Որպեսզի կատարվի այս աշխատանքը և տրվի նշված խնդրին լուծում, անհրաժեշտ է մոտ 18-ից 20 մլն. դրամ այս նախատեսնվող գումարը համայնքը իվիճակի չէ կատարել, դիմել ՀՄՆՀ. կազմակերպությանը կամ այլ դոնոր կազմակերպություններին:

Արդյունքը- Շահառու կլինեն ողջ համայնքը, կենտրոնը կսպասարկի համայնքի բնակիչների գրեթե բոլոր խնդիրների լուծմանը:Կսպասարկի երիտասարդների ժամանցի և երեխաներին գորխող խմբակներում ուսանելու համար:

ԾՐԱԳԻՐ 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նկարագիրը – Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի վարելահողերը մինչ (Նալբանդի) ջրանցքի գործունեության դադարելը համայնքի վարելահողերը մշակվել են ամբողջությամբ, ներկայումս ընդհանուր վարելահողերի 20 % -ն է մշակվում որոգում չլինելու պատճառով:

Նպատակը- Նախատեսվում է համաշխարհային բանկի և գյուղատնտեսության բարեփոխումների ծրագրերի գրասենյակների միջոցով կառուցել տեղական նշանակություն ունեցող ջրամբար, որի երկրաբանական հնարավորությունը համապատասխանում է ջրամբար կառուցելու համար:

Խնդիրը- Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համաշխարհային բանկի և գյուղատնտեսության բարեփոխումների ծրագրերի շրջանակներում: Ծրագրի նախնական արժեքը կկազմի մոտ 70 մլն. դրամ:

Արդյունքները- Ծրագրի իրականացման դեպքում կորոգվի մոտ 300-ից 350 հա հողատարածք կմշակվի վարելահողերը կնպաստի բերքի ավելացմանը և շահառու կդարնա ամբողջ համայնքը:

ԾՐԱԳԻՐ 3

Որոգման ցանցի և պոմպակայանի կառուցում.

Նկարագիրը – Լոռու մարզի Հարթագյուղ համայնքը կազմված է երկու բնակավայրերից «Նոր» կոչվող բնակավայրը կառուցվել է երկրաշարժից հետո, բնակավայրում չկա որոգման ցանց բնակիչները ամառային սեզոնին խմելու ջուրը օգտակործում են որոգման նպատակով:

Նպատակը – Նախատեսվում է կառուցել Դ=150 տրամաչափի որոգման ցանց 1,3 կմ և պոմպակայանի տեղադրում Խնկոյան ջրամբարի վրա:

Խնդիրը – Ներկայացնել Լոռու մարզպետարան ընդկրկելու 5-րդ հրատապ ծրագրերի շրջանակներում, ծրագրի նախնական արժեքը կկազմի մոտ 15-ից 17 մլն դրամ:

արդյունքները – կորոգվեն Նոր գյուղի տնամերձները, համայնքի բնակիչները կունենան ծառատնկման հնարավորություն, խմելու ջուրը չի օգտագործվի որոգման նպատակով և իվերջո որոգովի կդարնա մոտ 70 հա հողատարածք:

ԾՐԱԳԻՐ 4

Նախադպրոցական շենքի կառուցում.

Ներկայացումը – Հարթագյուղ համայնքում մինչ երկրաշարժը գործել է երկհարկանի մանկապարտեզի շենքի 90 երեխաների համար, երկրաշարժից հետո մինչ օրս համայնքի երեխաները հնարավորություն չեն ունեցել ստանալու նախադպրոցական դաստիերակություն, որը իր բացասական ազդեցությունը է թողել միջնակարգ դպրոցի առաջադիմության հարցում:

Նպատակը – Համայնքում կառուցել «նախադպրոցական մանկապարտեզի» շենք 40 երեխաների համար:

Խնդիրը – Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին ֆինանսական աջակցություն ստանալու հարցում: Ծրագրի նախնական արժեքը կկազմի 35-ից 40 մլն դրամ:

արդյունքները – Համայնքի նախադպրոցական երեխաները կունենան կրթվելու և ուրախ մանկություն անցկացնելու հնարավորություն, իր դրական ազդեցությունը կունենա միջնակարգ դպրոցի ուսման որակի վրա:
Երեխաների ծնողները կունենան ազատ իրենց հոգսերով և գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորություն:

ԾՐԱԳԻՐ 5

ԴՏ-75 մակնիշի տրակտորի ձեք բերում «ռոտոր» կոչվող սարքավորման հետ միասին

Նկարագիրը – Հարթագյուղ համայնքը գտնվում է Վանաձոր-Գյումրի ավտոճանապարհից դեպի հարավ 3,5 կմ հեռավորության վրա: Վերջին տարիներին առատ ձյան տեղումները պատուհաս են դարձել համայնքի բնակչության տեղաշարժվելու հարցում, հաճախակի ձյունաբքի և առատ ձյան պատճառով փակվում է համայնք տանող ճանապարհը:
Լինում է այնպես օրեր, որ չենք կարողանում մաքրել ճանապարհը ձյունից:

Նպատակը – Ձեռք բերել ԴՏ-75 մակնիշի տրակտոր, «ռոտոր» կոչվող սարքավորման հետ միասին:
Տրակտորը կոգտագործվի նաև գարնան գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար:

Խնդիրը – ԴՏ -75 տրակտորի համար դիմել Լոռու մարզպետարան հինգերորդ հրատապ ծրագրերի շրջանակներում տրամադրել 5 մլն. դրամ նշված տեխնիկայի ձեռք բերելու համար:

Արդյունքները – Ձմռան ամիսներին կմաքրվեն ճանապարհները համայնքի ազգաբնակչությունը կունենա անխափան շարժվելու հնարավորություն:
Տեխնիկան կոգտագործվի նաև գարնան գյուղատնտեսական աշխատանքներին:

ԾՐԱԳԻՐ 6

Սպորտ դահլիճի կառուցում

Նկարագիրը – Հարթագյուղ համայնքի երիտասարդությունը մասնավորապես միջնակարգ դպրոցի աշակերտները ընդհանրապես զրկված են սպորտով զբաղվելու և մարզվելու հնարավորություններից, մարզադահլիճի բացակայության պատճառով:

Նպատակը – Կառուցել սպորտդահլիճ միջնակարգ դպրոցին կից, որտեղ կանցկացվեն դպրոցի աշակերտների ֆիզկուլտուրայի դասերը, համայնքի երիտասարդությունը կունենա սպորտով զբաղվելու հնարավորություն:

Խնդիր – Դիմել ՀՀ կառավարությանը և ՀՄՆՀ –ի տնորենությունը համայնքի համար այս կարևորագույն ունեցող շենքի կառուցման հարցում:
Շենքի նախնական արժեքը կկազմի մոտ 40 մլն դրամ:

արդյունքները – Միջնակարգ դպրոցի աշակերտները կունենան ֆիզկուլտուրայի դասերը անցկացնելու հնարավորություն:
Համայնքի երիտասարդությունը կունենա սպորտով և իրեն սիրված սպորտաձևով պարապելու հնարավորություն:
ԵՎ իվերջո համայնքում կզարգանա սպորտը:

ԾՐԱԳԻՐ 7

Փողոցների գիշերային լուսավորություն

Ներկայացիրը –2012թ.-ին համայնքում կատարվել է գիշերային լուսավորության աշխատանքներ մոտ 3280 մ երկարությամբ սակայն կան փողոցներ, որոնք զրկված են գիշերային լուսավորությունից:

Նպատակը –Գիշերային լուսավորություն անցկացնել 15-րդ փողոցում 140 մ, 13-րդ փողոցում 300 մ, 14 –րդ փողոցում 120 մ, և նոր գյուղի 7-րդ փողոցում 240 մ, ընդամենը 800 մ երկարությամբ գիշերային լուսավորություն:

Խնդիր – 800 մ երկարություն գիշերային լուսավորության համար կպահանջվի 140 մ. դ = 100 տրամաչափի խողովակ և 40 մ դ =32 տրամաչափի, 1700 մ էլեկտրալար և 20 լապտեր:
Ծրագիրը կիրականացվի համայնքի միջոցների և բնակիչների անհատ ներդրումների հաշվին, իրականացնելու համար կպահանջվի 2 մլն դրամ:

արդյունքները – Համայնքը կունենա ևս 4 փողոց գիշերային լուսավորությամբ:
30-ից 35 ընտանիքներ կունենան գիշերային ժամերին շարժվելու հնարավորություն:

Համայնքի ղեկավար՝ Ա.Հարությունյան

ԾՐԱԳԻՐ 7

Փողոցների գիշերային լուսավորություն

Նկարագիրը –2012թ.-ին համայնքում կատարվել է գիշերային լուսավորության աշխատանքներ մոտ 3280 մ երկարությամբ սակայն կան փողոցներ, որոնք զրկված են գիշերային լուսավորությունից:

Նպատակը –Գիշերային լուսավորություն անցկացնել 15-րդ փողոցում 140 մ, 13-րդ փողոցում 300 մ, 14 –րդ փողոցում 120 մ, և նոր գյուղի 7-րդ փողոցում 240 մ, ընդամենը 800 մ երկարությամբ գիշերային լուսավորություն:

Խնդիր – 800 մ երկարություն գիշերային լուսավորության համար կպահանջվի 140 մ. դ = 100 տրամաչափի խողովակ և 40 մ դ =32 տրամաչափի, 1700 մ էլեկտրալար և 20 լապտեր:
Ծրագիրը կիրականացվի համայնքի միջոցների և բնակիչների անհատ ներդրումների հաշվին, իրականացնելու համար կպահանջվի 2 մլն դրամ:

արդյունքները – Համայնքը կունենա ևս 4 փողոց գիշերային լուսավորությամբ:
30-ից 35 ընտանիքներ կունենան գիշերային ժամերին շարժվելու հնարավորություն:

Համայնքի ղեկավար՝ Ա.Հարությունյան